Հավելված N 2
ՀՀ կառավարության 2022 թվականի
հուլիսի 14-ի N 1058 - Լ որոշման

# ՑԱՆԿ
# ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԾՐԱԳՐԻ 2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| Միջոցառման անվանումը | Պատասխանատուն | Համակատարողը | Կատարման ժամկետը | Ակնկալվող արդյունքը | Ակնկալվող ֆինանսական միջոցները |
|---|---|---|---|---|---|
| 1. Ծխելու դեմ պայքարին ուղղված գործունեություն իրականացնող առողջապահական կազմակերպությունների կարողությունների զարգացում և ծխելու դադարեցմանն ուղղված գործողություններ | | | | | |
| 1.1. Բժշկական կազմակերպություն-ների մասնագետների համար ծխախոտային կախվածությունների ախտորոշման սկզբունքները, խորհրդատվական ծառայություն-ները, ինչպես նաև բուժման ծրագրերի վերաբերյալ վերա-պատրաստման դասընթացների անցկացում | Առողջապահության նախարարություն | Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)<br><br>ՀՀ մարզպետարաններ<br>Մասնագիտական ասոցիացիաներ (համաձայնությամբ) | 2024-2025 թթ. | Տարեկան առնվազն 150 բժշկական մասնագետի վերա-պատրաստում | ՀՀ պետական բյուջե<br>1003 ծրագրի 11005 միջոցառում<br><br>ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ<br><br>1 մլն ՀՀ դրամ |
| 1.2. Ծխախոտի օգտագործման դադարեցմանն ուղղված աջակցու-թյան ծառայության (ծխելը դադարեց-նելու թեժ գծի) մասնագետների համար վերապատրաստման դասընթացների իրականացում | Առողջապահության նախարարություն | Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)<br><br>Մասնագիտական ասոցիացիաներ (համաձայնությամբ) | 2023–2025 թթ. | Ծխախոտի օգտագործման դա-դարեցմանն ուղղված աջակցու-թյան ծառայության մասնագետ-ների վերապատրաստում | ՀՀ պետական բյուջե<br>1003 ծրագրի 11005 միջոցառում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ<br><br>200 000 ՀՀ դրամ |
| 1.3. «ՀՀ առողջապահության նախարարի 2021 թվականի հուլիսի 28-ի թիվ 56-Ն հրամանում լրացում կատարելու մասին» առողջապահության նախարարի հրամանի ընդունում | Առողջապահության նախարարություն | - | 2023 թ. հոկտեմբերի 1-ին տասնօրյակ | Դեղերի հիմնական ցանկի վերանայում՝ ծխախոտային կախվածության բուժմանն ուղղված դեղերի ներառմամբ | Ֆինանսավորում չի պահանջում |
| 2. Ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործման հետևանքով առաջացած վնասների և հետևանքների, ինչպես նաև դրանց կանխարգելման վերաբերյալ հանրության իրազեկվածության մակարդակի բարձրացում | | | | | |
| 2.1. Բնակչության շրջանում ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առաջացած վնասների կանխարգելման և նվազեցման, ինչպես նաև ծխախոտային կախվածությունից ազատվելու ուղիների վերաբերյալ գիտելիքների տարածում, ներառյալ՝ տեղեկատվական, կրթական նյութերի, հուշաթերթերի, պաստառների տարածումը, սոցիալական գովազդների, քարոզարշավների կազմակերպումը | Առողջապահության նախարարություն | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)<br><br>Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ) | 2022-2024 թթ. | Բնակչության շրջանում ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առաջացած վնասների և դրա հետևանքների կանխարգելման և նվազեցման վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացում, ուղղված բնակչության շրջանում ծխախոտի օգտագործման առնվազն 4%-ով նվազեցմանը: | ՀՀ պետական բյուջե 1003 ծրագրի 11005 միջոցառում<br><br>ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ<br><br>Տարեկան 10 մլն ՀՀ դրամ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2.2. Հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրերում ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասների և դրանց կանխարգելման ուղիների վերաբերյալ թեմաների ներառում | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | Առողջապահության նախարարություն | 2022-2023 թթ. | Երեխաների և դեռահասների շրջանում ծխախոտային արտա-դրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործման հետևանքով առաջացած վնասների և հետևանքների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացում, ինչը կնպաստի երեխաների և դեռահասների շրջանում ծխելու կանխարգելմանը: | ֆինանսավորում չի պահանջվում |
| 2.3 «Ծխախոտային արտադրատե-սկաների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով պետական կառավարման համակարգի մարմինների աշխատակիցների շրջանում իրազեկվածության բարձրացում | Առողջապահության նախարարություն | ՀՀ Ոստիկանություն<br><br>Շուկայի վերահսկողության տեսչական մարմին<br><br>Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին | 2022-2024 թթ. | Շուկայում առկա և նոր ի հայտ եկող ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում | ֆինանսավորում չի պահանջվում |
| 3. Ծխախոտի դեմ պայքարի քաղաքականությանը ծխախոտի արդյունաբերության միջամտության բացառման նպատակով մեխանիզմների ապահովում | | | | | |
| 3.1. Ծխախոտի դեմ պայքարի ուղղությամբ առողջապահական քաղաքականության մշակման և կիրարկման գործում ծխախոտի արդյունաբերության միջամտության կանխարգելմանն ուղղված քայլերի իրականացում | Առողջապահության նախարարություն | | 2022 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | «Ծխախոտի դեմ պայքարի» առողջապահական քաղաքակա-նության մշակման գործընթացում ծխախոտային արդյունաբեր-ության միջամտության բացառման մեխանիզմների ստեղծման ապահովում | Ֆինանսավորում չի պահանջում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3.2. Ծխախոտի դեմ պայքարին ուղղված ջանքերի վրա բացասաբար ազդող ծխախոտի արդյունաբերության գործունության վերաբերյալ իրազեկվածության բարձրացում | Առողջապահության նախարարություն | Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)<br><br>ՀՀ մարզպետարաններ<br><br>Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)<br><br>Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ) | 2022-2026 թթ. | Ծխախոտային արդյունաբերության առևտրային և այլ կորպորատիվ շահերից ծխախոտի դեմ պայքարին ուղղված առողջապահական քաղաքականության պաշտպանություն | Ֆինանսավորում չի պահանջում |
| 4. Ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների բաղադրության և դրանցից արտանետվող նյութերի փորձաքննության և չափման կարգի, ինչպես նաև այդ բաղադրության և արտազատվող նյութերի կարգավորման չափաքանակների սահմանում | | | | | |
| 4.1. Ծխախոտային արտադրատեսակների բաղադրության և դրանցից արտանետվող նյութերի փորձաքննության և չափման կարգի, ինչպես նաև այդ բաղադրության և արտազատվող նյութերի կարգավորման չափաքանակների սահմանում | Առողջապահության նախարարություն | Էկոնոմիկայի նախարարություն | 2023 թ. հոկտեմբերի 1-ին տասնօրյակ | Ծխախոտային արտադրատեսակների բաղադրության և դրանցից արտանետվող նյութերի փորձաքննության և չափման կարգի, ինչպես նաև այդ բաղադրության և արտազատվող նյութերի կարգավորման չափաքանակները սահմանող ՀՀ կառավարության որոշման առկայություն | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 5. Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների փաթեթավորմանը և մակնշմանը ներկայացվող հիմնական պահանջների ապահովում | | | | | |
| 5. 1. Ծխախոտային արտադրատեսակների միատեսակ փաթեթավորմանը ներկայացվող պահանջների մշակում և «Ծխախոտային արտադրանքի | Էկոնոմիկայի նախարարություն | Առողջապահության նախարարություն | 2023 թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ | «Ծխախոտային արտադրանքի մասին» տեխնիկական կանոնակարգում (ՄՄ ՏԿ 035/2014) համապատասխան փոփոխությունների առաջարկի | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| մասին» տեխնիկական կանոնակարգում (ՄՄ ՏԿ 035/2014) համապատասխան փոփոխությունների առաջարկի ներկայացում Եվրասիական տնտեսական հանձնաժողով | | | | ներկայացում Եվրասիական տնտեսական հանձնաժողով | |
| 6. Ծխախոտի ծխից ազատ քաղաքականության իրականացման ապահովման նպատակով մեխանիզմների մշակում | | | | | |
| 6. 1 «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» օրենքի դրույթների կիրարկման ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացում | Առողջապահության նախարարություն | ՀՀ Ոստիկանություն<br><br>Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ<br><br>Շուկայի վերահսկողության տեսչական մարմին<br><br>Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին<br><br>Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | 2022–2026 թթ. | «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» օրենքի դրույթների կիրարկման ուղղությամբ տարեկան առնվազն 1000 օբյեկտի մշտադիտարկում | ՀՀ պետական բյուջե 1003 ծրագրի 11005 միջոցառում<br><br>ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ<br><br>20 մլն ՀՀ դրամ տարեկան |
| 6. 2 «Ծխախոտային արտադրատեսկաների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» օրենքի դրույթների խախտումների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում | Առողջապահության նախարարություն | | 2022–2026 թթ. | Օրենքի դրույթների խախտումների վերաբերյալ առկա տեղեկատվության համակարգում և դրանց վերաբերյալ էլեկտրոնային շտեմարանի ստեղծում | ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 7. Ծխախոտային արտադրատեսակների համար սահմանված հարկային քաղաքականության վերանայում | | | | | |
| 7. 1 Ծխախոտային արտադրատեսակների համար սահմանված հարկային քաղաքականության վերանայում՝ Հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու միջոցով: | Ֆինանսների նախարարություն<br><br>Պետական եկամուտների կոմիտե | Առողջապահության նախարարություն | 2023 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների նկատմամբ կիրառվող հարկային դրույքաչափերի վերանայում | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 8. Հայաստանի Հանրապետությունում ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման համաճարակաբանական հսկողության իրականացում | | | | | |
| 8.1 Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման տարածվածության վերաբերյալ հետազոտության իրականացում | Առողջապահության նախարարություն | Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)<br><br>ՀՀ մարզպետարաններ<br><br>Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)<br><br>Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ) | 2023-2026 թթ. | Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման տարածվածության վերաբերյալ հետազոտական տվյալների առկայություն | ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ<br><br>4 մլն ՀՀ դրամ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

14.07.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ